

## ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոսի

Վարդան Վալերիի Բեգլարյանի «Հողի մեքենայական դեգրադացիայի կանխարգելման բանվորական օրգանի մշակում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԲՈԿ-ի 033 մասնագիտական խորհրդի Ե.20.01-«Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

### ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից գյուղատնտեսությունում առավել հաճախակի են կիրառվում ծանրաքաշ անիվավոր տրակտորներ: Բազմաթիվ հետզոտություններով հաստատվել է, որ դաշտում բազմակի անցումների հետևանքով հողը գերպնդանում է, որի բացասական հետևանքները արտահայտվում են և բերքատվության անկումով և հողի էրոզիայի ավելացումով: Հատկապես հողի դեգրադացիա արձանագրվում է տրակտորների հետքի վրա մի քանի անցումների դեպքում: Ներկայացված ատենախոսությունը խնդիր լուծում է հենց սկզբնական փուլում, անմիջապես առաջին անցումից հետո, հետքի հողը վերա-դարձնելով ելակետայի վիճակի: Այս առումով ատենախոսական թեման արդիական է, ունի գիտական և գործնական նշանակություն:

ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ, ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ԴՐԱՆՑ  
ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսական աշխատանքում ձևակերպված գիտական նորոյթները, եզրակացությունները և առաջարկությունները հիմնավորված են տեսական և գիտափորձնական հետազոտությունների արդյունքներով, հավաստի են և պատրաստ են գյուղատնտեսության մեջ լայն կիրառության համար: Ինչպես տեսական, այնպես էլ գիտափորձնական հետազոտություններում կիրառվել են առաջավոր մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ: Հաշվարկների արդյունքները կասկած չեն հարուցում, քանի որ դրանք հիմնականում ստուգված են գիտափորձերով:

Գիտափորձերը կատարվել են համապատասխան մեթոդներով, որտեղ օգտագործվել են հեղինակի կողմից առաջարկված, մշակված ու հիմնավորված հետքափխրիչներ:

Գիտափորձերի ծավալը բավարար է ստացված տվյալները արժանահավատ համարելու համար:

#### ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՈՒՅԹԸ

Առաջին անգամ մշակվել է տրակտորի հետքի անմիջական փխրեցման սարքավորում, որի շնորհիվ հետքահողը վերադարձվում է նախնական ելակետային վիճակին և հաջորդ անցումների ժամանակ տրակտորի ընթացքային մասերի ազդեցությանը ենթարկվում է ոչ պնդացված վիճակով: Մշակվել է հետքափխրիչի պարամետրերի հաշվարկի տեսություն, որով հիմնավորվել են բանվորական օրգանների պարամետրերի նախնական արժեքները, որոնք հետագայում ճշգրտվել են գիտափորձերի ընթացքում:

#### ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Վարդան Վալերիի Բեգլարյանի ատենախոսական աշխատանքը շարադրված է 143 էջի վրա: Այն բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից ու առաջարկություններից, հավելվածներից, 93 անուն գրականության ցանկից, ընդգրկում է 6 աղյուսակ և 38 նկար:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսական թեմայի արդիականությունը և բերված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում հետազոտական մասն է, որտեղ վերլուծվել են թեմային առնչվող գիտատեխնիկական գրականության մեջ նմանատիպ հետազոտությունների արդյունքները, հիմնավորվել է տրակտորների հետքահողի պնդաթափման և հողի դեգրադացիայի կանխարգելման անհրաժեշտությունը պնդացման նախնական փուլում: Վերջում ներկայացված են հետազոտությունների նպատակը և խնդիրները:

Երկրորդ գլխում կատարվել են թեմային վերաբերող տեսական հետազոտություններ, որոնց արդյունքում որոշվել է հեղինակի կողմից առաջարկված հետքափխ-

րիչի կառուցվածքային պարամետրերը և տեխնոլոգիական սխեման: Տեսականորեն ստացվել է հետքափխրիչի մատի օպտիմալ երկրաչափական ձևը՝ ցիկլոիդային կորության, որը կապահովի հետքահողի փխրեցման առավել բարձր արդյունք, նվազագույն էներգետիկ ծախսերի պայմաններում:

Ընդհանրապես տեսական հետազոտությունները կատարված են բարձր մակարդակով:

Երրորդ գլխում ներկայացված են գիտափորձնական հետազոտությունների ծրագիրը, օբյեկտները և մեթոդիկան:

Պատրաստվել են հետքափխրիչի երեք տիպի մատներ, որոնցով կատարվել է նախ լաբորատոր, ապա նաև դաշտային գիտափորձեր: Կիրառվել են առաջավոր մեթոդներ:

Գիտափորձերի ընթացքում հետքափխրիչների քարշային դիմադրության որոշման համար կազմվել է համապատասխան չափիչ տեղեկատու համակարգ:

Չորրորդ գլխում բերված են հետազոտությունների արդյունքները և դրանց վերլուծությունը:

Որոշվել են հետքահողի վրա ցորենի բերքատվության, հողի խտության և ագրեգատի քարշային դիմադրության փոփոխությունը հետքափխրիչի կիրառման դեպքում: Գիտափորձերի արդյունքներով կազմվել են համապատասխան գրաֆիկներ:

Գիտափորձերը կատարվել են գործող պահանջներին համապատասխան: Ստացված արդյունքները հավաստի են և կարելի է օգտագործել նմանատիպ տեսական հետազոտությունների ժամանակ:

Հինգերորդ գլխում ներկայացված է հետքափխրիչների կիրառման որակական և քանակական վերլուծությունը:

Կատարված հետազոտությունների հիման վրա ատենախոսը հանգել է ընդհանուր եզրակացությունների և գործնական առաջարկությունների:

Ներկայացված ատենախոսական աշխատանքում նկատվել են հետևյալ թերությունները և բացթողումները.

1. Կատարված հետազոտություններում հողի ֆիզիկամեխանիկական հատկանիշներից հետազոտված է միայն անվահետքի հողի խտությունը, մինչ-դեռ տրակտորների ըն-

թացքային մասերի ազդեցության հետևանքով փոփոխվում են հողի այլ հատկանիշներ ևս, որոնք նպաստում են հողի դեգրադացիային:

2. Հողը տրակտորների ընթացքային մասերով պնդանում և դեգրադացվում է դաշտում կատարվող բոլոր գործընթացների ժամանակ, բայց հեղինակը առաջարկում է հետքափխրիչի կիրառմամբ փխրեցնել միայն ցանքի ագրեգատում ընդգրկված տրակտորի հետքահողը, որը կազմում է դաշտի մակերեսի լավագույն դեպքում 30 տոկոսից ոչ ավելի:

3. Սովորաբար ցանքից առաջ կատարվում է գլանվակում, որը հողի մակերեսային շերտի թեթև պնդացումով նպաստում է խոնավության պահպանմանը: Արդյոք չկա մտավախություն, որ անմիջապես ցանքից առաջ հետքափխրիչով հետքահողի փխրեցումը կնպաստի հողի մակերեսային շերտի խոնավության արագ կորստին, որն էլ անշուշտ կունենա բացասական հետևանքներ:

4. Ասենախոսությունում չի պարզաբանված թե ինչքանով է հետքափխրիչի կիրառումը նպատակահարմար հողի մշակության նոր տեխնոլոգիաների, մասնավորապես՝ նվազագույն և գրոյական մշակության դեպքում:

Ներկայացված դիտողությունները սկզբունքային չեն և բոլորովին չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտագործնական նշանակությունը:


Ատենախոսական աշխատանքը հողի դեգրադացիայի կանխարգելման տեսանկյունից ունի շատ կարևոր նշանակություն: Ապահովում է տնտեսական արդյունավետության բարձրացում և ունի հողապաշտպան ֆունկցիա:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վարդան Վալերիի Բեգլարյանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է ավարտուն գիտական աշխատանք, որտեղ շարադրված են հեղինակի կողմից կատարված գիտատեխնիկական հետաքրքիր լուծումներ նվիրված տրակտորների հետքահողի պնդացումը վերացնելու և հետևաբար հողի դեգրադացիան կանխարգելելու շատ կարևոր խնդրի լուծմանը:


Ատենախոսությունն ըստ տեսական խնդիրների լուծման արդյունքների և գործնական արժեքների բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին, համապատասխանում է Ե.20.01- «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությանը, իսկ հայցորդ Վարդան Վալերիի Բեգլարյանն միանգամայն արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,  
տեխնիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ՝



Մելքոնյան Ա. Հ.

Ա. Հ. Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ,  
ՀԱԱՀ-ի գիտական քարտուղար,  
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Գ. Վ. Ավագյան

19.10.2021 թ.